ք. Երևան 24.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/158

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Մասնակից՝ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, ավտոճանապարհի միջին նորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.06.2020թ.-ի թիվ 26/26/9623-2020 գրությամբ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 24.06.2020թ.-ի թիվ ՀԲ/32/17382-2020 գրության հիման վրա, 29.06.2020թ.-ին «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 29.06.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 29.06.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/158 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

08.07.2020թ.-ին, 15.07.2020թ.-ին և 24.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.07.2020թ.-ին:

2. <u>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը 24.06.2020թ.-ի թիվ ՀԲ/32/17382-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների միջին նորոգման ծեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ), որին Գավառի ՃՇՇ ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում 3-րդ չափաբաժնի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվում արձանագրվել էին անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

11.06.2020թ.-ին գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է, Գավառի ՃՇՇ ԲԲԸ-ին ծանուցվել է անհամապատասխանությունների շտկման մասին, սակայն կազմակերպության կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չեն շտկվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով ընթացք տալ՝ մասնակցին ընդգրկելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (ա) ենթակետը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ » ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 03.07.2020թ.-ի թիվ ՀԲ//18446-2020 գրությամբ ներկայացրել է ՍՑ-ԼՕ-2020/158 ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի պատասխան-դիրքորոշման վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության դիրքորոշումը.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ ծածկագրով ընթացակարգին «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել էին հետևյալ անհամապատասխանությունները՝

1. Չափաբաժին 3-ի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվի 2-րդ բաժնի ընդհանուր արժեքը ներկայացվել է՝ խախտելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետը 3-րդ ենթակետի Ա դրույթը, այն է՝ հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշիվը, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:

2. Չափաբաժին 3-ի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվով աշխատանքների կատարման ընդհանուր արժեք է սահմանված 1,400,985,420 ՀՀ դրամ, սակայն ծավալաթերթ-նախահաշվի բաժինների արժեքների հանրագումարը 1,392,597,989 ՀՀ դրամ է:

3. Հայտով ներկայացված գնային առաջարկը /Հավելված 2/ հաստատված է ոչ վավեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

11.06.2020թ. մասնակիցը ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկման առաջարկի մասին:

12.06.2020թ. մասնակիցը պատասխանել է շտկման ծանուցմանը, սակայն շտկվել են արձանագրված 2-րդ և 3-րդ անհամապատասխանությունները:

Առաջին կետով արձանագրված անհամապատասխանության էությունը կայանում է նրանում, որ հաստատված-ծավալաթերթ-նախահաշվով աշխատանքների երկրորդ բաժնի (կողային առուներ և կողնակներ) կշիռ է սահմանված եղել 0.54, որը կիրառելով մասնակցի գնային առաջարկի (1,400,985,420 ՀՀ դրամ) նկատմամբ ստացվում է 7,565,321 ՀՀ դրամ: Կիրառելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 32-րդ կետի 3-րդ ենթակետի Ա դրույթը պարզ է դառնում, որ երկրորդ բաժնի մասով մասնակցի գնային առաջարկը պետք է լինի ոչ պակաս քան 6,808,789 ՀՀ դրամը և ոչ ավել քան 8,321,853 ՀՀ դրամը: Սակայն մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթի շտկված տարբերակում երկրորդ բաժնի արժեք դարձյալ նշված է եղել 8,387,480 ՀՀ դրամը:

Հավելենք նաև, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն մասնակցել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ ծածկագրով ընթացակարգին և մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու առաջարկը ներկայացնում ենք վերոնշյալ ընթացակարգի շրջանակում:»:

3. <u>«Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 29.06.2020թ.-ի գրությամբ դիմել է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.06.2020թ.-ի թիվ 26/26/9623-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին:

01.07.2020թ.-ի թիվ 15-2020 գրությամբ մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն էլեկտրոնային եղանակով մասնակցել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հայտարարված ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնին /Սևան - Մարտունի - Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ24+554-կմ50+000 հատվածի միջին նորոգման աշխատանքներ/, այլ ոչ թե ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/10Շ ծածկագրով մրցույթին:

Միաժամանակ հայտնում եմ, որ հայտերի բացման նիստում N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտի 3-րդ չափաբաժնի մասով բացված ծավալաթերթ-նախահաշվում առկա է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, որի արդյունքում 2020 թվականի հունիսի 11-ին N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից նիստը կասեցվել էր, այնուհետև ծանուցել էր «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն շտկել է N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունները և 2020 թվականի հունիսի 12-ին էլեկտրոնային եղանակով ուղարկել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ծանուցումն ուղարկած էլեկտրոնային հասեին /էլ. Նյութերը կցվում է/:

Միաժամանակ հայտնում եմ, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ծանուցումն ուղարկելու օրը կազմակերպության փաստացի գործունեության հասցեում /ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Սայադյան փողոց/ էլեկտրաէներգիա չի եղել /տեղեկանքը կցվում է/:»:

4. <u>ՍՑ-LO-2020/158 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոճանապարհի միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 14.05.2020թ.-ին հայտարարվել է «ՏԿԵՆ-

ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 3-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 3-րդ չափաբաժնի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվի 2-րդ բաժնի ընդհանուր արժեքը ներկայացվել է խախտելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետը 3-րդ ենթակետի Ա դրույթը, նաև նույն չափաբաժնի մասով լրացված ծավալաթերթ-նախահաշվով աշխատանքների կատարման ընդհանուր արժեք է սահմանված եղել 1,400,985,420 ՀՀ դրամ, սակայն ծավալաթերթ-նախահաշվի բաժինների արժեքների հանրագումարը նշվել է 1,392,597,989 ՀՀ դրամ, ինչպես նաև հավելված 2-ը հաստատված է եղել ոչ վավեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

iv. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, 11.06.2020թ-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և նույն օրը ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը որոշել է մերժել «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի հայտը:

vi. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 24.06.2020թ.-ի թիվ ՀԲ/32/17382-2020 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 29.06.2020թ.-ի թիվ 26/26/9623-2020 գրությամբ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ավտոճանապարհի միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 14.05.2020թ.-ին հայտարարված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2020/11Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով 3-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 11.06.2020թ-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և նույն օրը ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, 15.06.2020թ.-ին որոշել է մերժել «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի հայտը՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 15.06.2020թ.-ին՝ Մասնակցի հայտը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով մերժվելու փաստով, սակայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 24.06.2020թ.-ի թիվ ՀԲ/32/17382-2020 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն

իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ԲԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.06.2020թ.-ի թիվ 26/26/9623-2020 գրությամբ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/158 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**